



Երկուշաբթի, 11 Սեպտեմբեր, 2023

### **2023-2024 Տարեշրջան – Դպրոցական Կանոններ**

Ցարգելի ծնողք/խնամակալ

Նոր ուսումնական տարեշրջանի մեկնարկին առիթով Վարժարանիս տնօրենութիւնը եւ ուսուցչական կազմը ձեզի կը մաղթեն բարի վերամուտ: Բոլորին կը մաղթենք հաճելի ու ստեղծագործ տարի մը, որուն ընթացքին կարելի պիտի ըլլայ իրականացնել Նորանոր Նպատակներ ու ակնկալիքներ: Լիայոյս ենք, որ ձեզի հետ պիտի ունենանք սերտ համագործակցութիւն՝ հաւատալով, թէ ուսուցիչներ եւ ծնողներ յանձնառուներն են երեխաներու յառաջադիմութեան եւ կրթական նպատակներու իրականացման ամենօրեայ պայքարին:

#### **Դպրոցական ընդհանուր կանոններ**

Նարեկ Հայկական Վարժարան յաճախող իւրաքանչիւր աշակերտ-աշակերտուհիէ կ'ակնկալուի յարգել հետեւեալ դպրոցական օրէնքներն ու կանոնները.-

#### **ԱՃԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԺԱՄԱՆՈՒՄ –ՄԵԿՆՈՒՄ**

Ծնողներէն կը խնդրուի միշտ յարգել դպրոցի ժամանակացոյցը եւ ըլլալ ճշդապահ:

- Դպրոցը կը գործէ կ.ա. ժամը **7:45-ԷՆ մինչեւ կ.ե. ժամը 1:10:** Աշակերտները պարտին ժամանել առաջին դասապահի սկիզբէն 15 վայրկեան առաջ եւ մեկնիլ արձակումէն անմիջապէս ետք: **Առաւօտեան ժամը 7:30-ԷՆ առաջ եւ կ.ե. 1:10-ԷՆ ետք աշակերտներու դպրոցէն ներս ներկայութենէն խուսափիլ, որովհետեւ երեխաներու ապահովութեան պատասխանատուութիւնը լիովին ծնողքը կը կրէ:**
- Աշակերտի ուշ ժամանումը կը խախտէ դասապահի հեզասահ ընթացքը եւ պէտք է պատճառաբանուի:
- Աշակերտներու կանուխ մեկնումի յատուկ պարագային, ծնողը/խնամակալը պարտի ստորագրել դպրոցէն մեկնելու արտօնագիրը:
- Ծնողներ պարտին երեխաները ձգել եւ առնել դպրոցի մուտքէն: Անվտանգութեան նկատառումներուն համաձայն, դպրոցին մուտքերը կղպուած պիտի մնան ամբողջ օրուան ընթացքին: Մուտք կարելի է գործել միայն դպրոցի մայր մուտքէն:

- Դպրոցի աշխատանքներու հետ անմիջական առնչութիւն չունեցող անձերու մուտքը արգիլուած է, առ ի բացառութիւն անոնց, որոնք եկած են հրաւերով կամ ժամադրութեամբ:

## ԱՆՅԱՆՊԱՏՈՒԹԻՒՆ – ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆ

- Երբ աշակերտ մը անհանգիստ կը զգայ կամ հարբուխի նշաններ կ'ունենայ (ջերմութիւն, հագ, հոսող քիթ), ծնողները պէտք է փափկանկատ գտնուին եւ իրենց զաւակը դպրոց չըրկեն՝ աշակերտները եւ ուսուցիչները չվարակելու համար:
- Փոխանցիկ հիւանդութեան պարագային, ըստ Կրթութեան Նախարարութեան ցուցմունքներուն, աշակերտը ստիպուած է տունը մնալ, մինչեւ ամբողջական ապաքինում:
- Դպրոցէն ներս, երբ աշակերտ մը անհանգստութեան կամ հիւանդութեան պատճառաւ անկարող կը դառնայ իր դասերը շարունակել, ծնողք տեղեակ պիտի պահուին, որպէսզի իրենց միջոցներով աշակերտը փոխադրուի տուն կամ տարուի բժիշկին:
- Մարզանքի պահէն զերծ մնալու համար անհրաժեշտ է ունենալ ծնողքի բացատրողական տեղեկագիրը:

Դպրոցի կանոններուն համաձայն երբ աշակերտ մը դպրոցէն կը բացակայի, ծնողներ պարտին գրաւոր կերպով տեղեակ պահել տնօրէնութիւնը: Առանց լուրջ պատճառի յաճախակի բացակայութեանց պարագային, Պարտադիր Կրթութեան օրէնքին համաձայն, տնօրէնութիւնը պարտի տեղեակ պահել Կրթութեան Նախարարութիւնը: Նոյնը կը վերաբերի այն պարագաներուն, երբ ծնողքը առաւօտուն յաճախ իր զաւակը ուշ կը հասցնէ դպրոց:

## ՀԱՄԱԶԳԵՍՏ ԵՒ ՎԱՅԵԼՈՒՉ ԱՐՏԱՔԻՆ

### Առօրեայ տարազ

- մոխրագոյն փէշ (մինչեւ ծունկ) կամ դպրոցական երկար տաբատ
- սեւ կօշիկ
- ճերմակ շապիկ կամ Polo-շապիկ
- գոց կապոյտ, միագոյն, V օձիքով, բուրդէ pullover
- սեւ կամ գոց կապոյտ վերարկու – **առանց նշաններու կամ գրութեան**



### Պաշտօնական տարազ

- մոխրագոյն փէշ (մինչեւ ծունկ) կամ դպրոցական երկար տաբատ
- սեւ կօշիկ
- ճերմակ շապիկ
- կրծքանշան
- փողկապ



## **Մարզական տարագ**

- մարզական կօշիկ
- ճերմակ T-shirt
- գոց կապոյտ մարզական կարճ տաբատ (ծունկի հասակ)
- մոխրագոյն մարզական տարագ (track-suit) առանց գրութիւններու (ձմեռնային տարագ)

## **ԱՐԳԻՆՈՒԱԾ**

- նեղ տաբատ (leggings)
- գլխարկով պլուզ (hooded tops)
- գլխարկ
- համազգեստին վրայ նշաններ
- աչքառու զարդեղէն, մատանի կամ կախուած օղեր
- տղոց պարագային՝ երկար կամ արտառոց մազ
- բջիջային հեռաձայն եւ էլեկտրոնային սարքեր
- խելացի ժամացոյց [Smart watch]

Մարզական տարագի գործածութիւնը արտօնուած է միմիայն ձմեռուան ամիսներուն եւ ան չի փոխարիներ համազգեստը: Աշակերտներ պարտին ներկայանալ մարզական տարագով միմիայն այն օրերուն երբ մարզանքի դասապահ ունին:

## **ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՅՈՒՍԱԿ**

Դպրոցական պայուսակի ծանրութիւնը կ'ազդէ երեխաներու ֆիզիքական առողջութեան վրայ, հետեւաբար, պէտք է ամենօրեայ ստուգում կատարել, որպէսզի անոնք իրենց հետ բերեն **միմիայն օրուան անհրաժեշտ դասագիրքերն ու գրենական պիտոյքները:**

## **ՏԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ**

Թելադրելի է, որ ծնողներ հետեւին իրենց զաւակներուն առօրեայ աշխատանքներուն եւ քաջալերեն, որ անոնք անպայմանօրէն կատարեն իրենց առօրեայ պարտականութիւնները:

Սրբագրուած գրաւորները երբ տուն դրկուին, ծնողներ պարտին զանոնք ստորագրուած վերադարձնել դպրոց, առանց ուշացումի:

Դպրոցական դասագիրք կամ գրադարանի գիրք կորսնցնելու պարագային, աշակերտը պարտի վճարել նոր գիրքին արժեքը:

## **ՅԻՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ**

Տարեդարձներու կամ այլ առիթներով կարելի է դպրոց ուղարկել փաթեթուած անհատական անուշեղէններ, որոնք աշակերտներուն պիտի բաժնուին վերջին դասապահի աւարտին:

## **ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ**

Ուսուցիչներու հետ ձեր հաղորդակցութիւնը պիտի կատարուի ClassDojo հարթակի միջոցաւ՝ դպրոցի աշխատանքային ժամերուն եւ կամ աշխատանքային օրերու ընթացքին՝ մինչեւ կ.ե. ժամը 3:00:

Կը խնդրուի խորհրդապահական տեղեկութիւններու փոխանցման համար ուսուցիչ ուսուցչուհիներու եւ կամ տնօրէնութեան հետ անմիջական կապ հաստատել:

**Կառուցողական եւ արդիւնաւետ համագործակցութեան ակնկալիքով՝ նոր տարեշրջանի սեմին բոլորին կը մաղթենք բարի վերամուտ, առողջութիւն, նաեւ անձնական եւ ընտանեկան երջանկութիւն:**

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

Δευτέρα, 11 Σεπτεμβρίου 2023

### ***Έναρξη σχολικής χρονιάς 2023-2024 – Βασικοί κανονισμοί του Σχολείου***

Αγαπητοί γονείς/κηδεμόνες,

Με την ευκαιρία της έναρξης της νέας σχολικής χρονιάς, το Διδακτικό Προσωπικό και η Διεύθυνση του Σχολείου, επικοινωνούμε μαζί σας και σας καλωσορίζουμε στο νέο αυτό ξεκίνημα. Ευχόμαστε σε όλους μια ευχάριστη και δημιουργική χρονιά γεμάτη όνειρα, στόχους και προσδοκίες. Προσβλέπουμε στη στενή συνεργασία μαζί σας, αφού πιστεύουμε πως εκπαιδευτικοί και γονείς είναι σύμμαχοι στον καθημερινό αγώνα για την πρόοδο των παιδιών και την επίτευξη των εκπαιδευτικών στόχων.

#### **Βασικοί κανονισμοί λειτουργίας του Σχολείου μας**

Με την έναρξη της σχολικής χρονιάς θα θέλαμε να υπενθυμίσουμε πρακτικές που σχετίζονται με τους κανονισμούς λειτουργίας του σχολείου και αφορούν στην ομαλή διεξαγωγή του εκπαιδευτικού έργου:

#### **ΠΡΟΣΕΛΕΥΣΗ ΚΑΙ ΠΑΡΑΛΑΒΗ ΠΑΙΔΙΩΝ:**

- Το σχολείο λειτουργεί καθημερινά από τις **7:45π.μ. ως τις 1:10μ.μ.** Τα παιδιά θα πρέπει να έρχονται στο σχολείο 15' πριν την έναρξη των μαθημάτων και να φεύγουν αμέσως μετά τη λήξη τους. **Η παρουσία των παιδιών στο σχολείο πριν από τις 7:30 π.μ. και μετά τις 1:10μ.μ. πρέπει να αποφεύγεται, γιατί η ευθύνη για την ασφάλεια τους βαραίνει τους ίδιους τους γονείς.** Αργοπορημένη άφιξη των παιδιών παρεμποδίζει την ομαλή διεξαγωγή του μαθήματος και πρέπει να αιτιολογείται. Μαθητές/τριες που καθυστερούν πρέπει να εξασφαλίσουν **άδεια εισόδου από τη Διεύθυνση. Οι γονείς/κηδεμόνες θα πρέπει να συμπληρώνουν το έντυπο αργοπορημένης προσέλευσης.**
- Επισημαίνεται ότι οι γονείς πρέπει να αφήνουν και να παραλαμβάνουν τα παιδιά στην **είσοδο του σχολείου**. Οι εισοδοί του σχολείου παραμένουν κλειδωμένες σε όλη τη διάρκεια λειτουργίας του σχολείου για σκοπούς ασφάλειας. Η πρόσβαση είναι δυνατή μόνο από την κεντρική είσοδο. Σε περίπτωση που προκύπτει ανάγκη παραλαβής των παιδιών πριν τη λήξη των μαθημάτων πρέπει να συμπληρώνεται από τους γονείς ή άλλο εξουσιοδοτημένο άτομο **σχετική ενυπόγραφη δήλωση.**
- Υπενθυμίζεται, παράλληλα, ότι κανένας/καμία, που δεν έχει άμεση σχέση με τη διεξαγωγή των μαθημάτων και με το έργο του σχολείου, δεν επιτρέπεται να εισέρχεται στον χώρο του σχολείου, εκτός αν έχει προσκληθεί από το σχολείο ή έχει αιτηθεί και εγκριθεί η είσοδός του/της σε αυτό.

## ΑΔΙΑΘΕΣΙΑ – ΑΠΟΥΣΙΑ

- Σύμφωνα με τους κανονισμούς λειτουργίας των σχολείων, οποιαδήποτε απουσία μαθητή από το σχολείο πρέπει να αιτιολογείται με γραπτή βεβαίωση από τον γονιό ή τον κηδεμόνα.
- Αν ένας μαθητής απουσιάζει από το σχολείο πολύ συχνά χωρίς σοβαρό λόγο, η διεύθυνση του σχολείου έχει υποχρέωση να ειδοποιεί τον Διευθυντή Δημοτικής Εκπαίδευσης για παραβάσεις του Νόμου περί Υποχρεωτικής Εκπαίδευσης. Το ίδιο ισχύει και στις περιπτώσεις όπου οι γονείς καθυστερούν συστηματικά να φέρνουν τα παιδιά τους στο σχολείο.
- Σε περίπτωση που ένα παιδί αισθάνεται αδιαθεσία ή έχει συμπτώματα γρίπης (βήχα, πυρετό, μύτη που τρέχει) πρέπει να μένει στο σπίτι για να αποφευχθεί η μετάδοση της ασθένειας σε άλλα παιδιά και εκπαιδευτικούς.
- Σύμφωνα και με τις οδηγίες των Υπουργείων Παιδείας, Πολιτισμού, Αθλητισμού και Νεολαίας και Υπουργείου Υγείας, μαθητής που έχει προσβληθεί από οποιαδήποτε μεταδοτική ασθένεια, όπως ιλαρά, ανεμοβλογιά, βαριάς μορφής γρίπη, ιώσεις κτλ., πρέπει να απέχει από το σχολείο μέχρι την πλήρη ανάρρωσή του. Σε τέτοια περίπτωση, κατά την επιστροφή του παιδιού θα πρέπει να προσκομίζεται οπωσδήποτε ιατρικό πιστοποιητικό.
- Όταν ένα παιδί αισθανθεί αδιαθεσία στο σχολείο, ώστε να μην μπορεί να παρακολουθήσει το μάθημα, θα ειδοποιηθούν οι γονείς για να το μεταφέρουν στο σπίτι ή στον γιατρό.
- Για να δικαιούται ένα παιδί να μη συμμετέχει στο μάθημα της γυμναστικής πρέπει να παρουσιάσει δικαιολογητικό από τους γονείς του.

## ΜΑΘΗΤΙΚΗ ΣΤΟΛΗ ΚΑΙ ΑΤΟΜΙΚΗ ΚΑΘΑΡΙΟΤΗΤΑ ΤΩΝ ΠΑΙΔΙΩΝ:

Τα παιδιά πρέπει να έρχονται στο σχολείο με τη μαθητική τους στολή. Η ενδυμασία και η εμφάνιση των παιδιών πρέπει να είναι ευπρεπής, πρακτική και ανάλογη με την ηλικία τους.

### Τις καθημερινές

- γκριζα φούστα (μέχρι το γόνατο) ή σχολικό μακρύ παντελόνι
- μαύρα παπούτσια
- άσπρο πουκάμισο ή άσπρο «Polo-shirt»
- σκούρο μπλε μονόχρωμο τρικό με V γιακά
- σκούρο μπλε ή μαύρο άνορακ – σκέτο



### Επίσημη στολή (υποχρεωτική για συμμετοχή στις εκδηλώσεις)

- γκριζα φούστα (μέχρι το γόνατο) ή γκριζο σχολικό μακρύ παντελόνι
- μαύρα παπούτσια
- άσπρο πουκάμισο
- σήμα
- γραβάτα



### **Στολή γυμναστικής**

- παπούτσια γυμναστικής
- άσπρο «T-shirt»
- Μπλε κοντό παντελονάκι
- Γκρίζες σκέτες φόρμες

Σημειώνεται ότι η χρήση αθλητικής φόρμας επιτρέπεται **μόνο κατά τους χειμερινούς μήνες και δεν αντικαθιστά τη στολή**. Για τους καλοκαιρινούς μήνες το παντελονάκι γυμναστικής (το οποίο φτάνει μέχρι το γόνατο) θεωρείται μέρος της στολής του σχολείου **μόνο για τη μέρα που έχουν μάθημα Φυσικής Αγωγής**.

### **ΑΠΑΓΟΡΕΥΟΝΤΑΙ:**

- στενά παντελόνια (leggings)
- φούτερ με καπέλο
- καπέλο
- διάφορα εμβλήματα τυπωμένα πάνω στη στολή
- φανταχτερά χρυσαφικά ή κρεμαστά σκουλαρίκια
- εξεζητημένη κόμμωση
- κινητό τηλέφωνο, ηλεκτρονικές συσκευές
- έξυπνο ρολόι (smart watch)

### **ΣΧΟΛΙΚΗ ΤΣΑΝΤΑ:**

Το βάρος της σχολικής τσάντας επηρεάζει τη σωματική υγεία των παιδιών γι' αυτό θα πρέπει να γίνεται καθημερινός έλεγχος ώστε τα παιδιά να μεταφέρουν μαζί τους **μόνο τα σχολικά βιβλία και τη γραφική ύλη που χρειάζονται για τη διεξαγωγή των μαθημάτων κάθε μέρας σύμφωνα με το ωρολόγιο πρόγραμμα**.

### **ΚΑΤ'ΟΙΚΟΝ ΕΡΓΑΣΙΑ ΚΑΙ ΓΡΑΠΤΑ**

Οι γονείς οφείλουν να παρατηρούν την καθημερινή εργασία του παιδιού τους, να το ενθαρρύνουν και να σιγουρεύονται ότι έχει συμπληρωθεί η κατ' οίκον εργασία.

Τα γραπτά που στέλνονται στο σπίτι πρέπει να επιστρέφονται στο σχολείο υπογραμμένα χωρίς καθυστέρηση.

Σε περίπτωση απώλειας σχολικού βιβλίου ή βιβλίου βιβλιοθήκης, ο/η μαθητής/τρια οφείλει να πληρώσει την αξία του βιβλίου.

### **ΚΕΡΑΣΤΙΚΑ ΠΡΟΣ ΜΑΘΗΤΕΣ/ΤΡΙΕΣ**

Μπορείτε να στέλνετε συσκευασμένα ατομικά κεραστικά τα οποία θα δίνονται στους μαθητές/τριες στο τέλος της τελευταίας διδακτικής περιόδου.

## **ΕΠΙΚΟΙΝΩΝΙΑ ΜΕ ΤΟ ΣΧΟΛΕΙΟ**

Η επικοινωνία με το σχολείο θα γίνεται μέσω της πλατφόρμας ClassDojo κατά τη διάρκεια της σχολικής μέρας ή μέχρι τις 3:00 μ.μ. τις καθημερινές.

Για οποιοδήποτε θέμα εμπιστευτικού χαρακτήρα (ειδικά για θέματα υγείας) μπορείτε να επικοινωνήσετε άμεσα με τη Διεύθυνση ή τη/τον δασκάλα/ο του παιδιού σας.

**Σίγουροι για μια εποικοδομητική και αποτελεσματική συνεργασία, ευχόμαστε σε όλες και όλους καλή χρονιά, υγεία και κάθε προσωπική και οικογενειακή ευτυχία. Θα είμαστε πάντα στη διάθεσή σας.**

**ΑΠΟ ΤΗ ΔΙΕΥΘΥΝΣΗ**